

ИСТОРИЯ

Հայ Ժողովրդական կուսակցության հիմնադրումը

Մարգարյան Սուրեն Թ.

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru*

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477);

EDN: IQBDBN; DOI: 10.58587/18292437-2023.3-42

Հանգուցաբառեր՝ Հայաստանի առաջին Հանրապետություն, Հայ Ժողովրդական կուսակցություն, անկախություն, կուսակցություն, ընդդիմություն, ծրագիր, կառավարություն, պաշտոնաթերթ, խորհրդարան, կոալիցիա

Создание армянской народной партии

Саргсян Сурен Т.

*д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)
sargsyansuren@yandex.ru*

Аннотация. Армянская народная партия – одна из партий сыгравших важную роль в жизни армянского народа, была основана 11 апреля 1917 г. в Тифлисе благодаря усилиями интеллигенции, объединенной начиная с последней четверти XIX в. вокруг газеты "Мшак".

НПА созвала два съезда: 1-й в 1917 году 24-28 сентября в Тифлисе и 2-й – в 1919 г. в сентябре в Ереване, на которых были приняты программа и устав партии, а также избраны Центральный комитет и Центральное бюро состоящее из 23 человек (председатель Микаел Пападжанян). Первая программа НПА завершила, что за короткое время партия в результате политических реформ отделилась от российских кадетов и действует исключительно на национальной почве, признавая превосходство национальных интересов над классовыми.

НПА была сторонником преобразования государства в парламентское, правовое, демократическое путем мирных и постепенных реформ. НПА исповедовала принцип единственной ориентации – ориентации на Армению и армянский народ.

Ключевые слова: Первая Республика Армения, армянская народная партия, независимость, партия, оппозиция, программа, правительство, официальная газета, парламент, коалиция.

Creation of the Armenian People's Party

Sargsyan Suren T.

*Doctor of Sciences in History, professor,
Leading Researcher, at the NAS RA Institute of History (Yerevan, RA)
sargsyansuren@yandex.ru*

Abstract. One of the political parties that have played an important role in the life of the Armenian people since the last quarter of the XIX century by the efforts of the intelligentsia united around the newspaper "Mshak", the Armenian People's Party was founded in Tiflis on April 11, 1917: The NPA convened two congresses: the 1st in 1917. September 24-28 in Tiflis and the 2nd in 1919 in September in Yerevan. They adopted two programs and the party charter elected by the Central Committee and the Central Bureau of 23 people (Chairman Mikael Papajanyan). The first NPA program was confirmed, that in a short period of time, a political party it was separated from the Russian cadets and stood on national land.

NPA is not a revolutionary practice, a peaceful, gradual reform, he was a supporter of a parliamentary, legal, democratic state. The people recognized the superiority of national interests over class interests. The NPA recognized Armenia and the Armenian people should there is only one principle-Armenian orientation.

Keywords: First Republic of Armenia, Armenian People's Party, independence, party, opposition, program, government, official newspaper, parliament, coalition

Մուտք

Խորհրդային Միության տարիներին իշխող կոմունիստական վարչակարգի կողմից Հայաստանի Առաջին Հանրապետությունը (ՀԱՀ) հայտարարվել էր «դաշնակցական» և հաճախ փաստերը խեղաթյուրելով՝ պայքար էր ծավալվել

նրա պատմությունը վատաբանելու ուղղությամբ: Հայկոմկուսի կողմից դա արվում էր, որպեսզի գաղափարական հակառակորդ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ) ներկայացվեր շատ «վտանգավոր», որպեսզի իրենց կատարած գործն ավելի կարևորվեր և

արժանանար գնահատանքի ու բարձր վարձատրության: Իսկ Սփյուռքում 1918-1920 թթ. պատմությանն անդրադառնում էին գերագանցապես այն դեպքերում, երբ ավանդական կուսակցությունների միջև գաղափարական տարաձայնությունները սրվում էին: Այդտեղից էլ նման գրվածքներում հիմնականում գերակա էր սուբյեկտիվիզմը և կուսակցական գծին հավատարիմ մնալու ձգտումը: 1991 թ. Հայաստանի վերանկախացումից հետո էլ ՀԱՀ-ի պատմությունը երբեմն ավելորդ գունագարվում էր, գործիչների մեծ մասն արժանացվում լուսապասակի, իսկ երբեմն էլ՝ ինչպես խորհրդային պատմագիտության, այնպես էլ նրանց ավանդույթները ժառանգած ՀՀ-ի նոր իշխանավորների կողմից անհիմն հարձակումների ենթարկվում: Այնինչ, հարկավոր է մերժել կուսակցականությունը և ամեն ինչ լուսաբանել օբյեկտիվ և անաչառ դիրքերից:

Հայտնի է, որ XX դարասկզբին հայ իրականությունում կուսակցությունները լծված էին Հայկական հարցի սայլին, իսկ սոցիալ-քաղաքական խնդիրներին վերաբերում էր որպես հեռավոր ու մշուշապատ տեսիլքի¹: Այդ պատճառով այդ շրջանում գործած կուսակցությունների գործունեությունը գնահատելիս հարկավոր է չափանիշ ընդունել նրանց ազգաշահությանը և պետականության գաղափարի պաշտպանության գործին նրանց նվիրվածությունը:

ՀՀ գոյության երկուսուկես տարիներին իշխող քաղաքական ուժը ՀՅԴ-ն էր: Մյուս կուսակցությունները հիմնականում ընդդիմություն էին: Հանրապետության ձևավորման սկզբնամասում ստեղծված բարդ իրավիճակում փորձի և օրենքների բացակայության պայմաններում դուրս մնալով Կառավարությունից ու մասնակցելով ամենալայն լիազորություններ

րով օժտված Խորհրդարանի աշխատանքներին, նրանք հնարավորություն էին ստանում լուրջ դեր խաղալու պետական կյանքի կարևոր խնդիրների լուծման գործում և հիմնականում հանդես էին բերում զուսպ և հանդուրժողական կեցվածք: «Մենք որ ապրում էինք անասելի պայմաններում, - գրում է Էսեռների տեսաբաններից Ա. Խոնդկարյանը, - որով և շատ ասելի առիթ ունէինք ջղայնոտ ու կուսական լինելու, շատ հարցեր լուծում էինք համերաշխութեամբ» [1]: Մինևույն ժամանակ բոլոր քաղաքական ուժերի, այդ թվում նաև ՀՅԴ-ի, գործունեության վրա մշտապես ազդում էր հայ ժողովրդին սպառնացող արտաքին վտանգի ու հանրապետության առջև ծառայած մռայլ հեռանկարների գիտակցումը:

ՀՀ առաջին խորհրդարանում գործել են ՀՅԴ, Սոցիալ-դեմոկրատներ (ՄԴ), Սոցիալիստ հեղափոխականները (Էսեռներ) և Հայ Ժողովրդական կուսակցությունները (ՀԺԿ): Դրանցից ֆինանսա-տնտեսական և կադրային ամենամեծ ռեսուրսներն ուներ ՀԺԿ-ն:

1. Հայ Ժողովրդական կուսակցության ձևավորումը

ՀԱՀ-ում ՀՅԴ-ից հետո ամենահզոր քաղաքական ուժի՝ ՀԺԿ-ի պատմության վերաբերյալ նյութերը շատ քիչ են: ՀԺԿ-ին նվիրված հուշագրություններ էլ չկան²: Նյութի այդ սակավությունն ու խորհրդային շրջանում տիրող միակուսակցական համակարգը արգելք է հանդիսացել և ՀԺԿ-ի պատմությունը դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Միակ բացառությունը Դավիթ Խեչումյանի մի քանի հրապարակումներն են [2; 3]: **Սակայն** 1918-1920 թթ. պատմությանն անդրադարձած ուսումնասիրողներից ոմանք որոշ դեպքերում անդրադարձել են ՀԺԿ-ին: Մասնավորապես Ռ. Հովհաննիսյանը [5], Լ. Խուրշուդյանն ու Կ. Խուրավերդյանը [4, էջ 102], Ա. Հակոբյանը [6, էջ 106-111; 7], Վ. Մելիքյանը [8], Հ. Վարդիվառյանը [9, էջ 315-391], Գ. Ավագյանը [10], Վ. Բաբա-

¹ Թեկուզ այն հանգամանքը, որ գրեթե բոլոր հայ կուսակցությունների ակունքներում ունենոր դասին պատկանող կամ նրա ծոցից դուրս եկած մտավորականությունն էր, արդեն իսկ մեր ասածի խոսուն վկայություն է: Ակնհայտ իրողություն է նաև այն, որ չնայած նրանց ծրագրերի գունագեղ «սոցիալիստական» հանդերձանքին, Արմենականների հետ հանչակյաններն էլ, դաշնակցականներն էլ առանց դասի ու դասակարգի խտրականության իրենց շարքերն էին ընդունում բոլոր այն հայորդիներին, ովքեր պատրաստ էին պայքարել Հայաստանի ու հայ ժողովրդի ազատության համար, իսկ դասակարգային ներհակություններին ու առավել ևս դասակարգային պայքարին բացի զուտ տեսական, հաճախ իրականությունից կտրված թերթային հրապարակում-բանավեճերից փաստորեն ուշադրություն չէին էլ դարձնում.:

² Լավ է, որ գոնե իրենց հուշերում ՀԺԿ-ին երբեմն անդրադարձել են **Ս. Վրացյանը** («Հայաստանի Հանրապետություն», Փարիզ, 1928), **Ա. Խատիսյանը** («Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», Պեյրուք, 1968), **Ա. Ահարոնյանը** («Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Քաղաքական օրագիր, 1919-1927»), Եր., 2001, **Ա. Գարբեհյանը** («Հայ ազատագրական շարժման օրերեն», Եր., 2003), **Ա. Խոնդկարյանը** («Օպոզիցիան հանրապետական Հայաստանում», «ՎԷՄ», 1933, Ա, էջ 63-82, Բ, էջ 68-79, 1934, Գ, էջ 76-98, Ե, էջ 43-46):

ջանյանը [11], Վ. Վիրաբյանը [12] և ուրիշներ: Կուսակցության պատմության վերաբերյալ զգալի նյութեր կան Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ), Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) ֆոնդերում³, տպագրված փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում⁴ և մամուլում⁵:

Կուսակցության գաղափարական նախորդները «Մշակ» թերթի շուրջը համախմբված մտավորականներն էին՝ մշակականները: Վերջիններս էլ ՀԺԿ-ի պատմությունը հասցնում էին XIX դ. 70-80-ական թվականները: Կուսակցությունը պաշտպանում էր հայ ազատական-ժողովրդավարական շրջանակների շահերը և արևմտահայ ռամկավարների՝ Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության (ՀՍՌԿ) հետ [16], գտնվում էր սերտ, բարեկամական հարաբերությունների մեջ: Մեզանում սխալմամբ հաճախ ՀԺԿ-ին նույնացրել են կայսրության հպատակ ազգերին սուկ ազգային-մշակութային ինքնավարություն խոստացող ռուսական Կադետներ կուսակցության (ԿԴ) հետ, այնինչ, ՀԺԿ-ն ուներ ընդգծված ազգային նկարագիր:

Արևելահայոց քաղաքական կյանքի կենտրոն Թիֆլիսում «Մշակ» թերթի շուրջ համախմբված հենց այս մտավորականության ջանքերով էլ (նախաձեռնող խումբը Հ. Առաքելյան, Ս. Պապաջանյան, Ս. Հարությունյան, Լ. Ղուլյան, Գ. Մելիք-Ղարազյոզյան և ուրիշներ) 1917 թ. ապրիլի 11-ին հիմնադրվեց Հայ Ժողովրդական կուսակցությունը: Հրապարակվեց հռչակագիր, որը փաստորեն ուներ ծրագրային բովանդակություն⁶: ՀԺԿ-ի որևէ խորհրդանիշ գտնելու ուղղությամբ մեր ջանքերն անարդյունք եղան: Ամենայն հավանականությամբ կուսակցությունը զինանշան, դրոշ կամ մեկ այլ խորհրդանիշ չի հասցրել ստեղծել: Նորաստեղծ կուսակցությանն անդամագրվեցին մտավորականներ, ֆաբրիկատերեր, առևտրականներ,

վաճառականներ, մանր ու միջին քաղաքային և գյուղական խավերի ներկայացուցիչներ⁷:

ՀԺԿ-ն ողջունեց ռուսական Փետրվարյան մեծ և անարյուն հեղափոխությունը և իր համակրանքն ու աջակցությունն հայտնեց Ժամանակավոր կառավարությանը: Ազգային և տնտեսական խնդիրների լուծումը թողնվում էին Սահմանադիր ժողովին:

ՀԺԿ ծրագիրը և կանոնադրությունը

ՀԺԿ-ն գումարել է երկու համագումար՝ 1-ինը 1917 թ. սեպտեմբերի 24-28-ը Թիֆլիսում և 2-րդը՝ 1919 թ. սեպտեմբերին Երևանում: Դրանցում ընդունվել են կուսակցության երկու ծրագրերը և կանոնադրություն, որով կանոնակարգվել են կենտրոնի և մասնաճյուղերի հարաբերությունները և այլ կազմակերպական հարցեր:

ՀԺԿ-ի առաջին ծրագիրը հավաստեց, որ կարճ ժամանակում կուսակցությունը քաղաքական բարեշրջման արդյունքում սահմանազատվել էր ռուս կադետներից և կանգնել էր ազգային հողի վրա [17, էջ 108]:

Համագումարն ընտրեց 23 հոգիանոց Կենտրոնական կոմիտե և Կենտրոնական բյուրո: Կենտրոնական բյուրոյի նախագահ ընտրվեց Ռուսաստանի 4-րդ պետական դումայի և Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամ Միքայել Պապաջանյանը [17, էջ 35], իսկ փոխնախագահներ՝ Համբարձում Առաքելյանը, Իսահակ Ամիրջանը և հայտնի բժիշկ Կարապետ Ստեփանյանը⁸:

Կուսակցության առաջին համագումարում ընդունված հիմնարար փաստաթղթերը 1917 թ. ապրիլի 11-ին հրապարակված հռչակագրի հիման վրա վերամշակված և սեպտեմբերի 27-ին վավերացված կուսակցության անդրանիկ ծրագիրն ու կանոնադրությունն էին [18]⁹:

Ծրագիրը բաղկացած էր Ընդհանուր պետական և Ազգային հարցեր բաժիններից և 75 հոդվածներից: Առաջին բաժինն ուներ ութ, իսկ երկրորդը՝ երկու ենթագլուխ: Ծրագրի առաջին հոդվածում հայտարարվում էր, որ ՀԺԿ-ն համազգային կուսակցություն է և «կարող է ճիշդ բանալ թե՛ Ռուսաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս» [18, էջ 3]: Ծրագրվում էր երկրում

³ Տե՛ս ՀԱԱ ֆ. N N 292, 1022, 4033, Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ Ա. Չոպանյանի, Հ. Թումանյանի, Ծիրվանզադեի, Ս. Աբեղյանի, Թ. Ազատյանի ֆոնդերը և այլն:

⁴ Օրինակ՝ [13; 14; 15 այլն]:

⁵ Շահեկան են հատկապես ՀԺԿ պաշտոնաթերթեր «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն» ինչպես նաև «Վան-Տոսպ», «Հայաստան», «Մշակ», «Հորիզոն», «Կառավարության լրաբեր», «Հովիտ», «Վեմ», «Тифлиский листок», «Кавказское слово» պարբերականները:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, գ. 7, թ. 1-2, ֆ. 1022, գ. 7, թ. 96, թ. 26, Մշակ, 7. IV.1917:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, գ. 1, թ. 562, «Մշակ», 14 սեպտեմբերի 1917, «Ժողովրդի ձայն», 29 հունիսի, 1919:

⁸ Տե՛ս նույն տեղում, 13. X. 1917:

⁹ Ի դեպ, ծրագիրը համարվում է նաև ՀԺԿ-ի թիվ 1 հրատարակությունը:

դասային արտոնությունների վերացում և բոլոր քաղաքացիները, առանց սեռի, դավանանքի և «ազգի խտրութեան, հավասար կղաճնային օրենքի առաջ: Հռչակվում էին մամուլի, խղճի, խոսքի, միտինգների, կրթության և այլ դեմոկրատական ազատություններ: Հայտարարվում էր, որ եկեղեցին պետք է անջատ լինի պետությունից, վերացվի գրաքննությունը: Մարդիկ պատասխանատվության կարող էին ենթարկվել բացառապես դատարանների վճիռներով: Մասնավոր սեփականության իրավունքն համարվում էր անձեռնմխելի: Առանձին ենթաբաժիններ էին հատկացված պետական կարգին և տեղական կառավարմանը: Հայտարարվում էր, որ երկիրը պետք է «լինի դեմոկրատական պարլամենտական հանրապետություն» և «օրենսդրական իշխանությունը պատկանելու է ժողովրդական ներկայացուցչության» [18, էջ 7]: Իսկ վերջիններս ընտրվելու էին ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվությամբ: Հստակ հայտարարվում էր, որ ոչ մի որոշում, կարգադրություն, հրաման, «ինչ անուն էլ որ կրէ և ումնից որ բղխէ» չի կարող օրենքի ուժ ստանալ առանց ժողովրդական ներկայացուցչության որոշման [18, էջ 8]: Շեշտվում էր նաև, որ բոլոր տեսակի հարկերն ու դրանց չափերը պետք է որոշվեն բացառապես օրենսդրական կարգով: Բոլոր այդ սկզբունքները պիտի գործեին նաև տեղական կառավարման մարմիններում, որոնք պիտի կազմվեին ըստ ազգային հատկանիշի:

«Դատաստան» ենթաբաժնում հռչակվում էր, որ դատական իշխանությունը պետք է անկախ լինի իշխանության մյուս՝ օրենսդիր և գործադիր թևերից: Բոլորը պետք է հավասար լինեն դատարանի առաջ, իսկ դատական գործընթացները՝ պետք է կազմակերպվեին հրապարակային և ունենային մրցակցային բնույթ: Վերացվում էր մահապատիժը և կիրառվում պայմանական դատապարտությունը:

«Ֆինանսներ և տնտեսական քաղաքականություն», «Հողային օրենսդրություն» ենթաբաժիններում լուսարանվում էին կուսակցության մոտեցումներն այդ կարևոր տնտեսական ոլորտներին և պատահիր համարվում դեմոկրատական սկզբունքների կիրառումը: «Բանվորական օրենսդրություն» ենթաբաժնում էլ հռչակվում էին ութամյա աշխատանքային օրվա, գործադուլի իրավունքի, գիշերային և սահմանված չափերից ավելի աշխատանքային օրերի նորմա-

վորման, կանանց և անչափահասների աշխատանքի պաշտպանության, պետական ապահովագրություն մտցնելու և այլ առաջադիմական պահանջներ: Իսկ «Ժողովրդական լուսավորություն» ենթաբաժնում հայտարարվում էին նախնական դպրոցներում ընդհանուր, ձրի և պարտադիր ուսուցման, դպրոցներում «սեռի, ծագման և կրօնի վրա հիմնված են հիմնված» [18, էջ 15], բոլոր սահմանափակումների վերացման անհրաժեշտության մասին:

ՀԺԿ-ն Հայկական հարցում Արևելահայաստանի և Արևմտահայաստանի համար դրսևորում էին տարբերակված մոտեցում: Արևելահայերի համար նախատեսում էին «օրենսդրական մարմնով ազգային տերիտորիալ ատոնոմիա», պաշտոնական լեզուն պետք է լիներ հայերենը: Իսկ այդ ինքնավարության սահմաններից դուրս գտնվող հայերը պետք է վայելեին «անձնական ազգային-կուլտուրական ատոնոմիա» [18, էջ 17]: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա ժողովրդականներն այն համարում էին միջազգային հարց, որը հնարավոր էր լուծել որևէ միջազգային վեհաժողովում, իսկ ՀԺԿ-ն պետք է ամեն ինչ աներ, որ «այդ հարցը լուծվի ըստ թիրքահայերի ցանկության» [18, էջ 17]: Հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում, ըստ քաղաքական հանգամանքների ու իրադրության, ժողովրդականներն ունեցել են փոփոխական և շրջահայաց դիրքորոշում: Սակայն միշտ ՀԺԿ-ն դավանել է Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է ունենան միայն մեկ՝ հայկական կողմնորոշում սկզբունքին:

ՀԺԿ-ն ոչ հեղափոխական գործելակերպի, խաղաղ, աստիճանական բարեշրջման, ամուր խորհրդարանական, իրավական, ժողովրդավարական պետության կողմնակից կուսակցություն էր: Ժողովրդականներն ընդունում էին ազգային շահերի գերակայությունը դասակարգային նկատմամբ:

Ընդունված կանոնադրությունը սահմանում էր. «կուսակցության անդամ կարող են լինել այն հայերը, որ ընդունում են կուսակցության ծրագիրը, կենթակվեն կուսակցական կարգապահության և պարբերաբար վճարքներ են հատուցանում կուսակցության գանձարանին» [18, էջ 18]: Սահմանվում էին կուսակցության բարձրագույն (համագումար) և «ընթացիկ» (կենտրոնական կոմիտե) ղեկավար մարմինների իրավասությունները և դրանց ու տեղական համապատասխան

կառույցների միջև եղած իրավունքների ու պարտականությունների շրջանակները:

Կազմակերպական ձևով ՀԺԿ-ն ազգային էր: Կուսակցության անդամ կարող էին լինել միայն հայերը¹⁰: Մյուս հայ ավանդական կուսակցությունների նման ՀԺԿ-ն ևս գործունեություն էր ծավալում բոլոր այն տեղերում, որտեղ հայեր էին բնակվում: Կուսակցությունը հիմնել է մասնաճյուղեր ոչ միայն Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում, այլև Հյուսիսային Կովկասում, Իրանում և այլուր: 1917 թ. ՀԺԿ առաջին համագումարի հաշվետվության մեջ հիշատակվում էր, որ հինգ ամսվա ընթացքում հիմնվել է կուսակցության 32 ճյուղ և 10 ենթաճյուղ¹¹, իսկ մինչև 1920 թ. վերջը՝ 50-ից ավելի ճյուղեր [4, էջ 102]: Իր գոյության ընթացքում ՀԺԿ-ն հրատարակել է «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն», «Ժողովրդական թերթ»¹², «Երկիր», «Նոր կյանք» թերթերը: Կուսակցությանը կից գործում էին ուսանողական, աշակերտական, կանանց ֆրակցիաներ, որոնք հրատարակում էին «Քայլեր» և «Նոր ուղի» թերթերը:

ՀԺ կուսակցությունը ակտիվ մասնակցություն ունեցավ Հայաստանի Առաջին հանրապետության քաղաքական կյանքին և ՀՅԴ-ի հետ մաս կազմեց կոալիցիոն կառավարությանը: Սակայն 1919 թ. Միացյալ և անկախ Հայաստանի մասին ակտի հրապարակումից հետո դուրս եկավ կոալիցիայից և ընդդիմադիր կենցաղի որդեգրեց: 1920 թ. Հայաստանի խորհրդայնացումից հետո հեռացավ Հայաստանից և ավելի ուշ՝ մաս կազմեց 1921 մի քանի կուսակցությունների միավորման արդյունքում ստեղծված Ռամկավար Ազատական կուսակցությանը:

Օգտագործած գրականության ցանկ

1. **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան հանրապետական Հայաստանում, «ՎԷՄ», Փարիզ, 1934, N 4:
2. **Խեչումյան Գ.**, Հայ Ժողովրդական կուսակցության գաղափարախոսության և գործունեության հակաժողովրդական էությունը, ԼՀԳ, Եր., 1984, թիվ 2:
3. **Хечумян Д.**, Критический анализ идеологии и политики Армянской народной партии /1917-1921гг./, (ատենախոսության սեղմագիր). – Եր., 1987.

4. **Хуршудян Л., Худавердян К.** Армянские политические партии. Некоторые вопросы истории и идеологии, «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», Калинин, 1980.
5. Հայաստանի Հանրապետություն (4 հատոր, The Republic of Armenia, հատոր 1 (1971) և հատոր II (1982), հատորներ III և IV (1996) U.C. Press):
6. **Հակոբյան Ա.**, Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը», ԼՀԳ, N 2(106), 2002:
7. **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, նույնի Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Եր., 2018:
8. **Եկիբյան Վ.**, 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Եր., 1997:
9. **Վարդիվառեան Հ.**, Մեծ երազի ճամբուն ուղեվորները եվ համապարսիակ պատմություն Ռամկավար ազատական կուսակցության, հատ. Ա, Արմենական կազմակերպություն, Հայ Ժողովրդական կազմակերպություն, Նիւ Ճրրզի, 2015:
10. **Ավագյան Գ.**, Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, ատենախոսության սեղմագիր, Եր., 2009:
11. «Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1918 - 1920 թթ.», Եր., 2017:
12. **Վիրաբյան Վ.**, Հայաստանի Հանրապետությունը 1918-20 թթ. կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից), Եր., 1999:
13. «Документы и материалы по Внешней политики Закавказья и Грузии, Тифлис, 1919.
14. Նիւթեր Հ.Յ. Դաշնակցության պատմության համար (այսուհետև՝ Նիւթեր...), խմբ. **Հր. Տասնապետեանի**, հրատ. Հ. Յ. Դաշնակցության, Պէրյութ, Ա, հատ., 1984, Բ. հատ., 1985, Գ. հատ., 1976, Դ. հատ., 1982:
15. Նիւթեր Հ.Յ. Դաշնակցության պատմության համար, խմբ. **Եր. Փամպուրեանի**, հրատ. Հ. Յ. Դաշնակցության, Պէրյութ, Ե. 2007, Չ. հատ., 2010, Է. հատ., 2010, Ը. հատ., 2011, Թ. հատ., 2012:
16. **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009:
17. **Հակոբյան Ա.**, Հայ ժողովրդական կուսակցության գաղափարախոսությունը, ծրագիրը և մարտավարությունը», ԼՀԳ, N 2 (106):
18. Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության, վերաքննված Ա. Համագումարում սեպտեմբերի 27-ին, Թիֆլիս, «Էկոնոմիա» տպարան, 1917:
19. **Սարգսյան Ս.**, Արևելահ ռամկավար մամուլը 1918-1920 թթ., Ե., 2019, - 210 էջ:

Տճանա/Հանձնվել է՝ 01.06.2022
Рецензирована/Գրախոսվել է՝ 15.06.2023
Принята/Ընդունվել է՝ 19.06.2023

¹⁰ Տե՛ս «Ժողովուրդ», 29. IX. 1918:

¹¹ Տե՛ս «Մշակ», 26. IX. 1917.

¹² Այդ պարբերականների մասին մանրամասն տես [19]: